ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ--3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրատեխնիկական սարքերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԷԼԴ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.04.2018թ. ժամը 12:00--ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով <<**Երևան Տելեկոմ Սոլուշնս**>> **ՓԲԸ**-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝

1 չափաբաժնի համար <<**Երևան Տելեկոմ Սոլուշնս**>> **ՓԲԸ** –ին,

- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԷԼԴ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ. Հովհաննիսյան

_____ Մ. Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան